

Ոչ հայի խոնկն ի, ոչ թուրքի ուզութունն ի:

... ունիս քաղու, հաւկիթ կամես գազն:

Ով կիրակին կիրակմուտ չապի:

Մըջ դժոխքի կրակին մաշի:

Որ ունիս լաւ կին՝ ինչ ունիս խաղանստուն:

Որ ունիս մեռել տունդ, ինչ ունիս ժամտուն:

Ուզէ հարուստի կատուն:

Մուզէ աղքատի խաթուն:

Ուռին ու քարտին, խնտ ուր գնալտին:

Ուստայ յողաթ խոր իկէ:

Ուտել խմել դուր իկէ:

Ձեռնն չկայ, յիւր իկէ:

Ձամբից խատ խատ

Մեղրից մատ մատ,

Կիրիշկեմ տեղը դարտակ:

Ձարոց ճարտար, քարոց տըխմար:

Ձեմ գովար քո խորտկութեն,

Եը գովամ քո խորորդութեն:

Ձուրի աղը խամսի, մատաղը կը խանգի:

Ձուտեմ, տամ ունեւորաց,

Երթամ դաս առաքելոց:

Պարկով լուս ի քէ:

Պիտուն ի նոյ չալետն յարեգակ:

Պընձի եռ աղբոր խէր,

Պուտի ձո՛ւ տէգընկայ խնո:

Պուտուկ ասեց— իմ տակ ոսկի ի,

— ուստի կուգամ, ասեց շերեփ:

Սեւ սէրակեր

Բընց վանայ խաւքերն էլ վեր:

Սեւտն՝ զարկեր կեզտէն:

Սուտ սրտացաւ,

Մոված փորացաւ

Սրտի սիրած եար էլի,

Գլուխ քաւաւ տազ էլի:

Վայ նոգիս՝ որ ընկաւ որդիս:

Վատ օր կաղեկնայ,


Վատ մարդ շաղեկնար:

Փառք քէ փշրուկ.

Յէր եռացիր կպար պտուկ:

Քուրկան քուրիկ է:

Ս. ԼԱՅԿՈՒՆԻ.



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԵԿԱՐՁՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՅՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ:

Մեր ներկայ ուսումնարանները որքան էլ զերազանց լինին հին ուսումնարաններից, դարձեալ շատ բան ունինք զեռ. անելու պրանց կազմակերպութեան համար, շատ թերութիւններ կան մեր մանուկների կրթութեան զործը կանոնաւորելու համար: Նը՝ մարիտ է, մեր հին ուսումնարանները շատ միակողմանի էին, բայց մի՞թէ միակողմանութիւնից ազատ են նաեւ մեր ներկայ ուսումնարանները, մի՞թէ, կարո՞ղ ենք հանգիստ խորձով ասել, թէ մեր ուսումնարաններում ուսման հիմքն այնքան լայն և հաստատուն է, որ կրթութիւնը ներդաշնակ և լրացած ամ-

բողջութիւն է կազմում: Անշուշտ ոչ: Այդ գատալձիւր գծուար չէ կարգալ եթէ ի նկատ առնենք, որ ներկայ մանկավարժութիւնը կրթութեան զործում երեք գլխաւոր ծիւղ է որոշում—կրթութիւն մարմնի, կրթութիւն մտքի և կրթութիւն զգացմունքի: Արդ՝ մարդկային բնութեան այս երեք կողմերի համահաւասար և ներդաշնակ զարգացումը միայն կարող է համապատասխանել կրթութեան նպատակներին: Բայց մի՞թէ կարո՞ղ ենք պնդել, թէ մարմնի, մտքի և զգացմունքների կրթութիւնը մի ներդաշնակ ամբողջութիւն են կազմում մեր ուսումնարաններում և նոյն իսկ շնտ կան այնպիսի ուսուցիչներ, որ կարող լինէին բմբունել այդ ներդաշնակութեան իմաստը և նշանակութիւնն ուսումնարանական զործում:

Մեր ուսումնարաններում աշակերտների ֆիզիքական կրթութիւնը, դրա հետ էլ ուսումնարանական ողջակեցիք պայմանները համարեա թէ բոլորովին անուշադրութեան են մատնուած. այսօր մենք չենք կարող մատնացոյց անել մի ուսումնարանի վրայ, որ այդ կողմից գոհացուցիչ դրութեան մէջ լինէր: Միևնոյնը կարելի է ասել նաեւ զգացմունքների պրտի կրթութեան վերաբերմամբ: Նշմարիտ է, կրօնը աւանդելի առարկաների մէջ առաջին տեղն է բռնում բայց գծուար թէ կարողանանք պնդել, որ դա առաջին տեղն է բռնում նաեւ իւր նպատակին ծառայելու վերաբերմամբ. մեր դպրոցներում դեռ կրօնի վրայ նայում են որպէս գիտելիքի, աշակերտի մտքի պաշարը աւելացնելու աղբիւրի վրայ: Համեմատաբար զերազանց դրութեան մէջ է մտքի կրթութիւնը:

Սակայն մեր ինչպէս եկեղեցական-ծխական նոյնպէս և թեմական դպրոցների ծրագիրների մէջ մտնում է երկու առարկայ ևս, որոնք մեծապէս կարող էին նպաստել ոչ միայն աշակերտի մտաւոր կրթութեան, այլ և զգացմունքների ու գեղարուեստական ճաշակի կրթութեան: Մեր խօսքը նկարչութեան և երաժշտութեան մասին է, որոնք մեր դպրոցներում ամենից աւելի անուշադիր են թողած և եղած-չեղած մի հաշիւ են կարծես: Սակայն այդ երկու առարկաներից երգեցողութիւնը զեռ փառք է. երաժշտութիւնից, դոնէ երգը այնքան էլ մոռացութեան չէ մատնուած չնորհիւ այն հանգամանքի, որ դա մի տեսակ շուքի, զարդի դեր է կատարում—մեր դպրոցների աշակերտները հանգիսաւոր և տօն օրերին պէտք է պատշաճաւոր երգեր երգեն և եկեղեցում ժամասացութեան մասնակցին:

Ընկի անբաղդ է նկարչութիւնը, որ սակայն այնքան էլ արժանի չէ մոռացութեան մատնուելու: Քանի որ դա ինչպէս կը տեսնենք, մեծ նշանակութիւն և կապ ունի ուսումնարանում աւանդելի միւս առարկաների հետ:

Պէտք է ասել, որ միայն մեր դպրոցների մէջ չէ, որ նկարչութիւնը շատ յետ ընկած լինելու արժանի առարկայ է նկատուում և առանձին խնամքի չէ արժանանում, միեւնոյնն է նաև աւելի լուսաւորուած ազգերի մէջ՝ ի հարկէ համեմատաբար: Եւ այդ իսկ պատճառով յայտնի մանկավարժական թերթերը առիթ չեն փախցնում նկարչութեան նշանակութիւնը աւելի ակներև կացուցանելու համար: Ընդեպիսին, օրինակ, մի այդպիսի կարծիք ամփոփ յօդուած լոյս տեսաւ մանկավարժական նշանաւոր «Education» թերթի մէջ, որը արտատպուեց նաև «Scientific American» «Образование» և այլ մանկավարժական թերթերի մէջ: Մենք կաշխատենք թարգմանաբար առաջ բերել այդ յօդուածը, որով մեր վերևում յայտնած մտքերը աւելի կը լուսարանուին:

Յօդուածագիրը նկատելով՝ թէ ընդհանուր կրթական ուսումնարաններում աւելի ուշադրութիւն են դարձնում մտքի զարգացման վրայ, յիշում է չորս առարկայ, որոնք մաքի կրթութեան համար աւանդուող բոլոր առարկաների հիմքն են կազմում — թուաբանութիւն (առհասարակ մաթեմատիկական առարկաներ), լեզու, նկարչութիւն և երաժշտութիւն: Նկարչութիւն խօսքը գործ է ածուած ընդարձակ իմաստով, որի մէջ մտնում են ինչպէս ձեւի, նոյնպէս գոյնի տարրերը: Նկարչութիւնը մի այնպիսի մտաւոր գործողութիւն է, որի միջոցով գաղափարները արտայայտուում են ինչպէս գծագրական, նայնպէս առարկայական ձևով:

Բայց վերևում յիշուած չորս առարկաներից միայն նկարչութիւնն է, որ բոլորովին յետ է մղուած և այդ ի հարկէ, առաջանում է նրանից, որ նկարչութեան նշանակութիւնը լաւ չեն ըմբռնում, ոչով և համարում են, թէ դա աւելորդ առարկայ է, կեսնքի մէջ անգործադրելի:

Սակայն թուաբանութիւնը, լեզուն, նկարչութիւնը և երաժշտութիւնը հիմնական առարկաներ են, մինչդեռ միւս առարկաները միայն գիտութեան ծառի ճիւղերն են, որի բները այդ չորս առարկաներն են կազմում: Որ մեր ասածն ուղիղ է, այդ երևում է նրանից, որ առանց այդ առարկաների գիտութեան դժուար է գիտութիւնների ուրիշ ճիւղերն ուսումնասիրել: Օրինակ՝ աշխարհագրութիւնն ուսումնասիրելու համար հարկաւոր է իմանալ թուաբանութիւն, լեզու և նկարչութիւն, որովհետև աշխարհագրութիւնը այդ տարրերի վրայ է հիմնուած: Միեւնոյն կերպով այդ երեք առարկաներն են կազմում մարդաբանութեան, բնագիտութեան, երկրաբանութեան և այլ գիտութեանց ճիւղերի տարրերը:

Եւ հաւաստի այդ չորս տարրերի ուսմամբ և գործադրել սովորելով հեշտանում է նաև գիտութիւնների զանազան ճիւղերի ուսումնասիրութիւնը:

Նկարչութիւնը արհեստների համար նշանաւոր հիմք է կազմում:— Բարտաշը մարմարից դուրով խոյեակ է քանդակում. իսկ գծագրողը մատիտով միեւնոյն բանը գծում է թղթի վրայ. այստեղ գործառնութիւնները տարբեր են, բայց մտաւոր գործողութիւնները միևնոյնն: Բարբինը մուրճով պայտ է կտում իսկ գծագրողը մատիտով է նկարում նոյնը. այստեղ ձեռքի աշխատանքը տարբեր է, բայց մտաւոր գործունէութիւնը միևնոյնն է: Միևնոյն կերպով նկարիչը վրձնելով է նկարում, փորագրողը՝ կտրելով է փորում, գերձակը—մկրատով է տալիս որոշ ձեւ. Բուրը մի գործիչ է, որով երկաթին ու փայտին զանազան ձեւեր են տալիս, սղոցաւոր մեքենան էլ զանազան ձեւեր ու նկարներ սղոցելու համար է, իսկ սաէծով զանազան անկուածներ են գործում: Եթէ այդ գործիչները գործ ածողը իւր աչքի առաջ չունի գծագրուած օրինակ, ապա ուրեմն նա—արտիստ է, արուեստագէտ է, իսկ ստացուած ձեւերը—նրա սեփական գործը: Իսկ եթէ գործ է ածում օրինակ, կաղապար, ապա ուրեմն կաղապար, նկար, տուողն է արուեստագէտը, իսկ աշխատողը լոկ մեքենայի մի մասն է կազմում, նա արհեստաւոր է:

Եթէ պայտարը կարող է թղթի վրայ նկարել պայտը, ուրեմն նա կարող կը լինի նաև երկաթից այդ օրինակով էլ առարկաներ կրուել: Եթէ գծագրողը կարող է թղթի վրայ պայտ նկարել, ապա ուրեմն նա կարող է և պայտ կռել, բաւական է որ պայտարութեան մեքենական դժուարութիւններին յաղթէ: Եթէ մէկը կարող է թղթի վրայ մի բան նկարել, կարող է և այդ նկարի նման առարկաներ շինել ինչ արհեստի կամ արուեստի մէջ ուզենայ, միայն թէ այդ արհեստի կամ արուեստի մեքենական դժուարութիւններին յաղթած լինի:

Նկարչութիւնը, բացի մեքենական արուեստներից, հիմք է կազմում նաև ուրիշ

զարդային արուեստներին — դա հիմք է որմնա-
նրկարի (ֆրեսկո), ծաղկաթղթերի, գործու-
ածքների ձևացնող արուեստներին — փորա-
գրութեան, ձուլագործութեան, կաղապարա-
գործութեան և անդրիագործութեան. վերաս-
տեղծական արուեստներին — փորանկարչու-
թեան, գունատպի, տպագրութեան, լուսանը-
կարչութեան. ստեղծական արուեստներին ո-
րոնք ինքնուրոյն աշխատութիւն են մտցնում
գործունէութեան ու է շրջանի մէջ:

Նկարչութիւնը մարդու ըմբռնման ըն-
դունակութիւնը զարգացնելով՝ կարծում է այն
ժամանակամիջոցը որ հարկաւոր է ծանօթա-
նալու համար դիտութեան այն ծիւղերի հետ,
որոնք լիովին կամ մասամբ հիմնուած են դի-
տողութեան վրայ: Օարգացած ըմբռնման
ընդունակութիւնը մեծապէս օժանդակում է
երեակայութեան: Օարգացած երեակայու-
թիւնն է, որ աշակերտին հնար է տալիս աղ-
բերակը մեծ գետ, աւազի փոքրիկ կոյտը ա-
հագին լեռ և լացած փոքրիկ ջուրը լիճ ըն-
դունելու: Դա է, որ նրան ընդունակ է դարձ-
նում ձեզ հետ ահագին ծանապարհոր-
դութիւն անելու անսահման ովկիանոսներ-
ով, անտառներով ու թփերով սար ու
ձորով: Դա է, որ նրան հնարաւորութիւն է
տալիս տեսնելու այնպիսի ձևեր, որոնք տե-
սողութեան սահմանից դուրս են և ըմբռնել
այնպիսի մեծութիւններ, որոնք իրենց մեծու-
թեամբ չափուել չեն կարող: Երեակայութիւ-
նը ստեղծագործական ընդունակութիւն է:

Նկարչութիւնը գիտութիւն ձեռք բերե-
լու ամենաշատատառ միջոցն է: Մի որեւիցէ ա-
ռարկայ նկարելու համար պէտք է ճշգրիտ դի-
տողութիւն և կարողութիւն, այդ առարկան
պատկերացնելու համար հարկաւոր է զարգա-
ցած յիշողութիւն. իսկ ձևերը չափելով արտա-
գրելու համար — մշակուած երեակայութիւն,
վերջապէս այդ առարկան մի որ և իցէ գաղա-
փարային համախմբութեան մէջ մտցնելու հա-
մար — յիշողութիւն և երեակայութիւն: Եւս-
պէս օրինակ՝ կատու նկարելու համար հար-
կաւոր է ճշգրիտ դիտողութիւն, իսկ նրա պատ-
կերը յիշելու և տախտակի վրայ նկարելու
համար հարկաւոր է սուր յիշողութիւն. իսկ
ծառ բարձրացող կատու նկարելու համար —
զարգացած երեակայութիւն, և վերջապէս
այդ ամեն ընդունակութիւնները հարկաւոր
են մի քանի կատուների ներդաշնակ պատկեր
նկարելու համար:

Նկարչութիւնը զարգացնում է ձեռքը եւ
մեքենական վարժութեան հիմքն է դնում: —
Նկարչութիւնը մի այնպիսի արուեստ է, որ

շատ հազիւ միայն այնպէս մեքենական է
դառնում, ինչպէս գրութիւնը, նա միշտ
գտնում է մտքի անմիջական վերահսկո-
ղութեան տակ: Նոյն իսկ ամենահասարակ
առարկայ նկարելու համար հարկաւոր է միտքը
որոշ չափով կեդրոնացնել՝ այդ առարկան պատ-
կերացնելիս ձեռքին հարկաւոր ուղղութիւ-
նը տալու համար: Մտքի և ձեռքի այս ան-
դադրում ներդաշնակ գործունէութիւնով մը-
շակում է խիստ ճշգրտութիւն և յստակու-
թիւն: Իսկ այդ յստակութիւնները օգտաւէտ
գործադրութիւն կարող են ստանալ ամեն տե-
սակ գործունէութեան մէջ:

Նկարչութիւնը ծիւղ դիտողութեան հիմ-
քն է: — Մի որ և իցէ առարկայ պատ-
կերացնելու համար պէտք է լաւ ուսումնա-
սիրել ոչ միայն նրա մանրամասնութիւննե-
րը, այլ և նրա ընդհանուր ձևը՝ որպէս ամ-
բողջութիւն: Հարկաւոր է նկատել ոչ միայն
ծառի ձևը, այլ և նրա ծիւղաւորման բնա-
ւորութիւնն ու տերեւները, ոչ միայն ծաղկի
ձևն ու երանգը, այլ և նրա բաժակաթեր-
թերի թիւն ու դասաւորութիւնը և այլն:
Օարգացած դիտողութիւնը կը նկատէ, որ
կատուն նման է վագրի շուրը գայլի և այլն,
կը գտնէ կղզու և լճի մէջ եղած նմանութիւ-
նը ինչպէս և նեղուցի և պարանոցի, հըր-
ուանդանի և խորշի: Վիտողութիւնը գաղափար
է ծնեցնում:

Նկարչութիւնը մանուկների համար շատ
պատշաճաւոր առարկայ է: — Մանուկները սի-
րում են նկարել: Պատկերացնելու ընդունակու-
թիւնը շատ զարգացած է մանուկների մէջ:
Մտաւոր գործունէութիւնը զգացողութիւնից
է սկսում: Մանուկը իւր զգացողութիւններով
է ապրում: Նրան գոհունակութիւն է պատճա-
ռում նայելը, լսելը, զգալը: Նրա աչքերը
սուր են, ականջը նուրբ և մատները գործուն-
եայ: Նա ամենից աւելի տեսնելով և նմա-
նեցնելով է ուսանում: Իսկ նկարչութիւնը ոչ
այլ ինչ է, եթէ ոչ տեսնել և նմանեցնել:

Նկարչութիւնը խիստ մեծ օժանդակ մի-
ջոց է դասատուի համար, և այդ ոչ թէ միայն
այն պատճառով, որ դա հետաքրքրութիւն է
զարթեցնում, այլ և նրա համար, որ թե-
թեւացնում է աշխատանքը և աւելի հրապոյր
է տալիս ուսումնարանին: Սահման չըկայ այն
ճանաչողութեան կարեւոր տարրերին, որ դրա
միջոցով դասատուն ձեռք է բերում:

Նկարելու կարողութեամբ ուսուցիչը կա-
րող է ցոյց տալ լիճը, լեռը, գետը և այլն ա-
մեն տեսակ կենդանի, թռչուն, սողուն, ամեն
տեսակ ծառ, թուփ և բոյս, պտուղ և ծաղիկ:

Վա կարող է ցոյց տալ թէ ինչպէս է ապրում էսքիմօսը հիւսիսային ստոցապատ երկրներում իսկ վայրերին՝ հարաւային արեւադարձային անտառներում։ Վա կարող է դաստիարակ մտցնել եղիպտական բուրգերն ու չինական տաճարները։ Վկարչութիւնը կարելի է գործադրել թէ՛ փորձնական և թէ՛ ամեն տեսակ դասերին։

Վկարչութիւնը կարելի է գործադրել ընթերցանութեան, պատմութեան, մարդակազմութեան, աշխարհագրութեան, մաթեմատիկայի և լեզուի դասերին. ուսուցիչը նկարչութեան միջոցով կարող է պատկերացնել այն ամենը ինչ որ տեսնում է, մտածում է և երևակայում։ Այսպիսով ուրեմն նկարչութիւնը նոր շրջան, նոր աշխարհ է բաց անում և կենսին աւելի ընդարձակում, լայնացնում և խորացնում։

Հարկաւոր է արդեօք աւելացնել որ մեր հասկացող ուսուցիչներն արդէն օգտուում են նկարչութիւնից (իսկապէս գծագրութիւնից) առարկաների դասատուութեան միջոցին։ Հենց առաջին բաժանմունքում հայոց լեզուի դասերին «շուն», «էշ», «կատու», «սեղան» և ուրիշ բազմաթիւ յօդուածներն անցնելիս ոչ միայն աշխատում են այդ առարկաների իսկականը կամ պատկերը ցոյց տալ, այլ և ամենապարզ գծերի միջոցով նկարել զրատախտակի վրայ, որպէս օրինակ երկու ձուռնի շրջան են գծում մէկը մեծ և միւսը փոքր, փոքրը վերեւից կայցնում են մեծին, փոքրի վրայ վերեւից երկու կողմը երկու եռանկիւնաձև փոքրիկ գծեր են քաշում իսկ ներքեւի մեծ շրջանի տակից մի բողբոջաձև կիսաշրջան քաշում և դուրս է գալիս կատու՝ նստած դիրքով։ Սիւննոյն գծագրութեան միջոցով աշակերտները ծանօթանում են երկրաչափութեան հիմունքների հետ, մինչև անգամ երկրաչափական խնդիրներ լուծում (Գ. և Լ. բաժանմունքներում)։ Իսկ Գ. բաժանմունքում հայոց լեզուն անցնելուս («Վահագնատական և հայրենի աշխարհով») հենց սկզբից աշխարհի չորս կողմերի մասին դադափար տալուց յետոյ, աշխարհագրութեան քարտէշ են նկարում աշարկերտի բնակավայրից մինչև Խառան, ապա և Արարատի հետ մինչև Պաղեստին գնալու համար։

Բայց նկարչութիւնից, որպէս ամենամեծ օժանդակ միջոցից օգտուող ուսուցիչներ մենք շատ չունինք, կղաճներն էլ, զլուււորապէս մեր մանկավարժների հայր Ս. Մանգլինսաւի աշակերտներն են. ընդհակառակն, մեծ մասամբ նկարչութիւնը մի տեսակ անխոր-

հուրդ առարկայ է նկատուած, կամ շատ շատ մի նախապատրաստական միջոց է համարուում մանուկների ձեռքը կանոնաւոր գրութեան վարժեցնելու համար, բայց դա նրկարչութեան ամենանեղ և համարեա ապարդիւն գործադրութիւնն է, քանի որ հենց կանոնաւոր գրութեան ուսուցիչն արդէն իսկ պարտաւոր է նախ և առաջ գրութեան տարրերը, հիմնական գծերը ուսուցանել, աշակերտի ձեռքը գրիչ բռնելու և կանոնաւոր գծեր քաշելու վարժեցնել և դրերի ձեռքը գիտակցաբար նորոշեալ դասաւորութեամբ գծելու համար։

Սակայն միայն մեր եկեղեցական ուսումնարանները չեն, որ կաղ է կաղ են տանում նկարչութեան ուսուցումը։ Նոյն իսկ մեր միջնակարգ ուսումնարանները անուշադիր են թողած այդ առարկան. էլ չենք ասում գունաւոր նկարչութեան, ներկերի գործադրութեան մասին, նոյն իսկ ածխանկարը (տուշ) շատ թոյլ է, կաղ է ի կաղ է առաջ գնում։ Աւ շատ հասկանալի է պատճառը—քանի որ նկարչութիւնը ուշադրութեան անարժան առարկայ է նրկատուած, ուստի և հոգ էլ չեն տանում որ նկարչութեան համար արժանաւոր, մասնագէտ ուսուցիչներ հրաւիրուին։ Սենք սովորաբար բողբոջում ենք, թէ բնագէտը զրականութեան պատմութիւն է ուսուցանում, քաղաքանոցներ բնական պատմութիւն, իրաւաբաններ՝ մաթեմատիկա, բայց հանդիսա սրտով ակնհաստես են լինում, թէ ինչպէս մի անպատրաստ ոչ մի զեղարուեստական պատրաստականութիւն չունեցող, նոյն իսկ առանց քանոնի ուղիղ գիծ կամ շրջան քաշել չմանցող անհատ նկարչութեան ուսուցիչ է դառնում։

Ի հարկէ նկարչութեան ուսուցումը կաղ է կաղ կը ընթանայ և դրանից սպասելի օգուտները չենք ստանալ։

Ղանական։



ՆՈՐ—ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԱՆՑԵԱԼԸ,

(Շարունակումին և վերջ)։

7.

Երկրորդ դժուարութիւնը, որին իւր գործունեութեան ընթացքում պատահեց հոգաբարձութիւնը, էր կանոնադրութեան խնդիրը։ Յայտնի է, որ դեռ 1871 թուականին, երբ կաթողիկոսն ընդունելով Նախիջևանցւոց խնդիրը դպրանոցը Նախիջևանում բանալու, յայտնեց նոցա, որ ինքը ար-